ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20-21-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

10 դեկտեմբերի 2020թ. քաղ. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի

անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա. Ալաբերքյան
Տ. Իսրաելյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 05/12/20թ. «Փյունիկ-2»-«Նորավանք» (ԱԽ077) խաղին «Փյունիկ-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Ավագյանի (N 24274) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար):

2. 05/12/20թ. «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ071) խաղի մասին.

Հանդիպման ավարտից հետո վիճաբանություն տեղի ունեցավ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների և հանդիպման գլխավոր մրցավարի միջև: Դաշտի տեր թիմի աշխատակիցների ջանքերով վիճաբանությունը շուտափույթ կանխվեց:

- «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստները հանդերձարաններից դուրս եկան խաղի մեկնարկից 2 րոպե առաջ (նախախաղային խորհրդակցության ժամանակ որոշվել էր, որ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստները պետք է հանդերձարաններից դուրս գային խաղի մեկնարկից 5 րոպե առաջ), ինչի արդյունքում խաղի մեկնարկը ուշացավ 3 րոպեով: «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստները հանդիպման 2-րդ խաղակեսին կրկին խաղադաշտ դուրս եկան ուշացումով, ինչի արդյունքում 2-րդ խաղակեսի մեկնարկը ուշացավ 3 րոպեով:
- «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների խաղաշապիկներին ազգանունները գրված չէին:
- Հաշիվները ցույց տվող էլեկտրական լուսատախտակը չէր աշխատում, այլ լուսատախտակ չկար:

3. 09/12/20թ. «ՈՒրարտու-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ078) խաղին «ՈՒրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Գոռ Լուլուկյանի (N 25238) հեռացման մասին (նույն խաղում 2 զգուշացում ստանալու համար):

4. 06/12/20թ. «Սևան»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ076) խաղի մասին.

Կարգադրիչներ ընդհանրապես չկային, ելումուտը չէր վերահսկվում, հանդիպման ընթանցքում մարզադաշտ էին մուտք գործում կողմնակի մարդիկ:

5. 06/12/20թ. «Ալաշկերտ-աղջիկներ»-«Գանձասար-Կապան աղջիկներ» (ԿԲԽ015) խաղի մասին.

Հանդիպումը սկսվել է 45 րոպե ուշացումով «Գանձասար-Կապան աղջիկներ» թիմը ուշ է ներկայացել խաղին:

Հարց. 1

ՈՐՈՇՈՒՄ.

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 05/12/20թ. «Փյունիկ-2»-«Նորավանք» (ԱԽ077) խաղին «Փյունիկ-2» թիմի ֆուտբոլիստ Էրիկ Ավագյանի (N 24274) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Էրիկ Ավագյանին որակազրկել 1 խաղով, «Փյունիկ ՖԱ ՀԿ»-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 2

ՈՐՈՇՈՒՄ.

2.1. 05/12/20թ. «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ071) խաղին՝ հանդիպման ավարտից հետո «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների և հանդիպման գլխավոր մրցավարի միջև վիճաբանություն տեղի ունենալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 39-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

2.2. 05/12/20թ. «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ071) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների հանդերձարաններից ուշ դուրս գալու պատճառով, խաղի մեկնարկը 3 րոպե և 2-րդ խաղակեսի սկիզբը 3 րոպե ուշացումով սկսվելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

2.3. 05/12/20թ. «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ071) խաղին՝ «Արարատ-2» թիմի ֆուտբոլիստների խաղաշապիկներին ազգանունները գրված չլինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 59-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

2.4. 05/12/20թ. «Արարատ-2»-«Վեստ Արմենիա» (ԱԽ071) խաղին՝ հաշիվները ցույց տվող էլեկտրական լուսատախտակը չաշխատելու, այլ լուսատախտակ չլինելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 66-րդ կետի համաձայն՝ «Արարատ» ՖԱ-ին տուգանել 20000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 3

ՈՐՈՇՈՒՄ.

3. 09/12/20թ. «ՈՒրարտու-2»-«Ալաշկերտ-2» (ԱԽ078) խաղին՝ «ՈՒրարտու-2» թիմի ֆուտբոլիստ Գոռ Լուլուկյանի (N 25238) հեռացման (նույն խաղում 2 զգուշացում ստանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 34-րդ հոդվածի

11-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Գոռ Լուլուկյանին որակազրկել 1 խաղով, «ՖԱ Ուրարտու ՄՀԿ»-ին տուգանել 25000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 4

ՈՐՈՇՈՒՄ.

4. 06/12/20թ. «Սևան»-«Արարատ-Արմենիա-2» (ԱԽ076) խաղի ժամանակահատվածում Դաշտի տեր Ակումբի Անվտանգության աշխատակիցների և/կամ կարգադրիչների բացակայության և/կամ ոչ պատշաճ, թերի աշխատանք կատարելու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 33-րդ հոդվածի 41-րդ կետի համաձայն՝ «Սևան ՖԱ» ՍՊԸ-ին տուգանել 30000 ՀՀ դրամի չափով:

Հարց. 5

ՈՐՈՇՈՒՄ.

1. 06/12/20թ. «Ալաշկերտ-աղջիկներ»-«Գանձասար-Կապան աղջիկներ» (ԿԲԽ015) խաղին՝ Գորիս-Երևան ավտոճանապարհին եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով, «Գանձասար-Կապան աղջիկներ» թիմը խաղին ուշ ներկայանալու համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 5-րդ հոդվածի 02 և 15-րդ հոդվածի 01 կետերի համաձայն՝ «Գանձասար-Կապան» ՖԱ-ին հայտարարել նախազգուշացում:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝

ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի համաձայն Հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ.

Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: